ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԻԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 83 - 84 (16478) ՇԱԲԱԹ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

ՄԵՐ ՁԱՅՆԸ ԻՍԱՆԻԻ ԹԻՎ 9 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ԴԱՎԻԹ ՃԻՃԻՆԱՁԵԻՆ ԵՎ ԱԽԱԼՑԻԽԵԻ ԹԻՎ 44 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ԳԻՈՐԳԻ ԿՈՊԱՁԵԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 8-ին անցկացվեցին երկրի օրենսդիր մարմնի ընտրությունները: Համամասնական ընտրակարգով «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանը» ստացավ ընտրողների 48,67 տոկոսի աջակցությունը, «Միասնական ազգային շարժումը» արժանացավ 27,11 տոկոսի պաշտպանությանը: Երրորդ կուսակցությունը, որը կարողացավ հաղթահարել 5 տոկոսանոց արգելագիծը եւ խորհրդարանում կունենա իր ներկայացուցչությունը, դա «Հայրենասերների ալյանսն» է: Այն ստացավ ընտրողների ձայների 5,01 տոկոսը: Ըստ ստացած ձայների, «Վրացական երազանքը» համամասնական կարգով խորհրդարանում կունենա 44 ներկայացուցիչ, «Միասնական ազգային շարժումը»՝ 27, իսկ «Հայրենասերների ալյանսը»՝ 6 պատգամավոր:

Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրակարգով ընտրություններին, ապա 73 ընտրատարածքներում հաղթողը, այսինքն ընտրողների ձայների 50 եւ ավե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱԶԱՏ ԷԻՆ»

Հոկտեմբսերի 19-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ անցկացվեց կառավարության նիստ:

Գիորգի Կվիրիկաշվիլին անդրադառնալով հոկտեմբերի 8-ին անցկացված խորհրդարանական ընտրություններին, անվանեց դրանք Վրաստանի պատմության մեջ աննախադեպ ազատ եւ թափանցիկ»: Վարչապետը երկրի բնակչությանը շնորհակալություն հայտնեց երկրի բնակչությանը ցուցաբերած աջակցության համար եւ նշեց, որ «Վրացական երազանքի» հաղթանակը մեծ նշանակություն ունի Վրաստանի զարգացման համար: «Դրանք կարեւոր ընտրություններ էին, որոնք որոշեցին Վրաստանի հետագա զարգացման օրակարգը: Կրկին անգամ ընդգծվեց Վրաստանում ժողովրդավարական գործընթացների անշրջելիությունը: Ցանկանում եմ իմ խորին հարգանքս արտահայտել երկրի յուրաքանչյուր քաղաքացու հանդեպ՝ կատա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՀԻՄՆԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՒՄԲ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ողջունում է երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախաձեռնությունը եւ պատրաստ է հիմնել խումբ՝ երկրի սահմանադրության փոփոխությունների մշակման համար:

Իր խոսքում երկրի նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին մասնավորապես նշեց. «Վարչապետի հայտարարությունը կնպաստի այդ թեմայի շահարկման դադարեցմանը եւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Վրաստանի խորհրդարանի կոմիտեներում ավարտվեց 2017 թվականի պետբյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման փուլը:

Դրա արդյունքների ընդգծմամբ, խորհրդարանը բյուջեի նախագիծը վերադարձնում է կառավարությանը: Իր հերթին, կառավարությունը պարտավոր է մինչեւ նոյեմբերի 5-ը խորհրդարանին վերադարձնել պետբյուջեի նախագծի վերամշակած տարբերակը, որից հետո նախագծի քննարկումը կշարունակվի խորհրդարանի լիագումար նիստի ձեւաչափով: Այդ դեպքում բյուջեի նախագիծը օրենսդիր մարմնին ներկայացնելու է վար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱՎԱԿԱՆ

ԶԱԶԱ ԹԱՎԱՁԵՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Հոկտեմբերի 20-ին Վրաստանի Սահմանադրական դատարանի դատավորները, ձայների մեծամասնությամբ, նախագահ ընտրեցին Զազա Թավաձեին:

Նշենք, որ այդ պաշտոնին հավակնում էր նաեւ Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Իրինա Իմերլիշվիլին:

Զազա Թավաձեն Սահմանադրական դատարանը կգլխավորի չորս տարվա ընթացքում, մինչեւ դատարավորի իր իրավասությունների ժամկետի սպառումը: Թավաձեի թեկնածության օգտին քվեարկել են Սահմանադրական դատարանի 8 դատավորներից 5-ը:

«ԹԲԻԼԻՍՈԲԱ 2016»

ԹԲԻԼԻՍԻՆ ՆՇԵՑ ԻՐ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԸ

Հոկտեմբերի 15-16-ին Թբիլիսին նշեց իր ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան»: Ավանդույթի համաձայն, 2016 թվականի «Թբիլիսոբան» էլ աչքի ընկավ բազմաբնույթ ու բազմաբովանդակ միջոցառումներով: Տոնի շրջանակներում կազմակերպվեցին ցուցահանդեսներ, տոնավաճառներ, մարզական մրցույթներ:

Մայրաքաղաքի տոնին մասնակցեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, քաղաքապետ Դավիթ Նարմանիան, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Թբիլիսոբա տոնի կապակցությամբ, Վրաստանի մայրաքաղաքի քաղաքապետի հրավերով, Թբիլիսիում էր գտնվում Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ փոխքաղաքապետ Դավիթ Օհանյանի գլխավորությամբ:

Հայաստանի մայրաքաղաքից ժամանած բարձրաստիճան հյուրերին, հոկտեմբերի 15-ին, ընդունեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան: Եր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

«ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ» ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ 8-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 20-ին մեկնարկեց «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք» խորագրով Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը, որը հոկտեմբերի 20-22-ը կանցկացվի Երեւանում, իսկ 23-24-ը՝ Ստեփանակերտում:

Համաժողովը կազմակերպել է ՀՀ սփյուռքի նախարարությունը՝ Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող խորհրդի եւ Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության, Հայաստանի ժուռնալիստների միության հետ համատեղ:

Համաժողովի աշխատանքին Վրաստանից մասնակցում են «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Ախալցխայի վերածնունդ» կայքի հիմնադիր Էդուարդ Այվազյանը, «ArmenianArtHall» էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր Վալերի Հունանյանցը, «Աղբյուր» էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր Արթուր Հովհաննիսյանը, լրագրող Սուսաննա Խաչատրյանը:

Համաժողովի բացման արարողությանը ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը, ՀՀ Նախագահի մամուլի քարտուղար Վլադիմիր Հակոբյանը, Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Ալեքսան Հարությունյանը, Հայաստանի հանրային ռադիոյի տնօրեն Արման Սաղաթելյանը, այլ պաշտոնատար անձինք:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՀԻՄՆԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՒՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կպատասխանի շատ հարցերի»:

«Մենք գտնում ենք, որ վերոնշյալ խումբը պետք է ունենա բարձր լիազորություն, հետեւաբար երկրի նախագահը որպես պետության ղեկավար եւ Վրաստանի միասնության ու ազգային անկախության երաշխավոր, ով միաժամանակ չի հանդիսանում որեւէ կուսակցության անդամ, պատրաստ է հիմնել վերոնշյալ խումբը՝ Վրաստանի նախագահի, վարչապետի եւ խորհրդարանի նախագահի համանախագահությամբ»,- հայտարարեց Գիորգի Աբաշիշվիլին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

չապետը կամ կառավարության անդամներից որեւէ մեկը:

Լիագումար նիստում արված դիտողությունների եւ առաջարկությունների հաշվառմամբ, նախագիծը կրկին վերադարձվում է կառավարությանը, որը վերամշակումից հետո մինչեւ նոյեմբերի 30-ը կրկին ներկայացվելու է խորհրդարանի քննարկմանը:

Պետբյուջեի նախագիծը խորհրդարանը իր լիագումար նիստում քննարկելու եւ ընդունելու է օրենսդիր մարմնի ցուցակային կազմի մեծամասնությամբ դեկտեմբերի երրորդ ուրբաթ օրվանից ոչ ուշ:

Հիշեցնենք, որ պետբյուջեի նախնական տարբերակի համաձայն, այն կազմում է 10 միլիարդ 555 միլիոն լարի, որից բյուջետային միջոցները կազմում են 9 միլիարդ 520 միլիոն, դրամաշնորհները՝ 135 միլիոն, իսկ վարկերը 900 միլիոն լարի:

Նախագծում հաջորդ տարվա դրամաֆինանսական եւ մակրոտնտեսական ցուցանիշները սահմանվել են՝ ելնելով պահպանողական մոտեցումից: 2017 թվականի համար համախառն ներքին արտադրանքի աճը սահմանվել է 4 տոկոսի չափով: 2017 թվականի պետբյուջեի նախագծում եկամուտների ցուցանիշը սահմանվել է 8 միլիարդ 715 միլիոնի չափով:

Ավելացնենք, որ 2017 թվականի պետբյուջեի նախագծի վերջնական տարբերակի հաստատումը վերապահվում է իններորդ գումարման խորհրդարանին:

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԲՅՈՒՋԵՆ ԿԸՆԴՈՒՆԵՆ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ»

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ նոր կառավարությունը եւ նոր խորհրդարանը 2017 թվականի բյուջեն կընդունեն էական փոփոխություններով եւ այն զգալիորեն կտարբերվի նախնական տարբերակներից: Նրա խոսքերով, բյուջեում նշանակալի փոփոխություններ կկատարվեն, որոնք կառնչվեն նաեւ մակրոտնտեսական կանխագծումներին: «Ինչպես հայտնի է, Արժույթի միջազգային հիմնադրամը ավելացրել է մեր երկրին առնչվող կանխագծումները: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչները նրանց հետ աշխատում են»,- հայտարարեց նախարարը:

«ԹԲԻԼԻՍՈԲԱ 2016»

ԹԲԻԼԻՍԻՆ ՆՇԵՑ ԻՐ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցիչները:

Տոնի շրջանակներում, Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան պատվավոր թբիլիսցու պատվոգրերը հանձնեց բժիշկների՝ Լեւան Չաչիաշվիլուն եւ Գելա Մուխաշավրիային, ֆուտբոլիստ վետերան Ալեքսանդր Չիվաձեին, դերասաններ Լալի Բադուրաշվիլուն, Նոդար Մգալոբլիշվիլուն եւ Թամար Սխիրտլաձեին, արվեստի գործիչ Ջեմալ Ճկուասելուն, դիրիժոր եւ երգիչ Ռոբերտ Գոգոլաշվիլուն, պարուսույց Փրիդոն Սուլաբերիձեին, ջութակահարուհի Լիանա Իսակաձեին, ակադեմիկոս Գիորգի Քվեսենտիրաձեին, նկարիչ Դավիթ Էրիսթավուն, նկարիչ-գրող եւ կինոյի ու թատրոնի ռեժիսոր Ռեւազ Գաբրիաձեին:

Միջոցառման ավարտին անցկացվեց գալա-համերգ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կու մայրաքաղաքների իշխանությունների ներկայացուցիչները քննարկեցին բարեկամական կապերի խորացման եւ համագործակցության զարգացման հետ առնչվող հարցեր: Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունը մասնակցեց քաղաքի տոնին նվիրված տարբեր միջոցառումներին:

Հոկտեմբերի 16-ին, Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունն այցելեց Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի եւ ներկա գտնվեց Թեմական առաջնորդի հանդիսապետությամբ մատուցված Սուրբ եւ Անմահ Պատարագին, որին ներկա էին թբիլիսահայ համայնքային գործիչներ եւ Վրաստանի խորհրդարանական ընտրություններին երկրորդ փուլ անցած «Վրացական երազանք» կուսակցությունից Թբիլիսիի Իսանի շրջանի մեծամասնական պատգամավորության թեկնածու Դավիթ Ճիճինաձեն:

Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում կիրակնօրյա պատարագին ներկա էին ուխտավորաբար Վրաստանում գտնվող Երեւանի Սուրբ Զորավոր Աստվածածին եկեղեցու հավատացյալները՝ հոգեւոր հովիվ արժանապատիվ Տեր Վահան քահանա Առաքելյանի գլխավորությամբ:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՄՑԽԵԹՈԲԱ-ՍՎԵՏԻՑԽՈՎԼՈԲԱ ՏՈՆԻՆ

Վրաց Ուղղափառ Սուրբ Եկեղեցին հոկտեմբերի 14-ին նշեց Մցխեթոբա-Սվետիցխովլոբա տոնը:

Վրաց հոգեւոր կենտրոն Մցխեթայի քաղաքապետի հրավերով, տոնի կապակցությամբ Վրաստան էր ժամանել Հայաստանի Էջմիածնի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Կարեն Գրիգորյանի գլխավորությամբ:

Հայոց հոգեւոր կենտրոնից ժամանած պատվիրակությանը ընդունեց Մցխեթայի քաղաքապետ Ավթանդիլ Նեմսիծվերիձեն: Կայացած զրույցի ընթացքում քույր քաղաքների ղեկավարները քննարկեցին փոխհարաբերությունների խորացման հարցեր եւ երկու ժողովուրդների հոգեւոր կենտրոնների համագործակցության հեռանկարներ:

Էջմիածնի քաղաքապետարանի պատվիրակությունը Ձվարիի եկեղեցում ներկա գտնվեց տոնական Սուրբ Պատարագին: Հյուրերը այցելեցին նաեւ քաղաքի նորաբաց մշակութային կենտրոն, դիտեցին այնտեղ ներկայացված ձեռքի աշխատանքների ցուցահանդեսը, ներկա գտնվեցին քաղաքի կենտրոնում՝ Մցխեթոբա – Սվետիցխովլոբա տոնին նվիրված հանդեսին:

Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, պատվիրակության անդամները այցելեցին Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցի: Կայացավ հանդիպում Վիրահայոց թեմի առաջնորդի օգնական հոգեշնորհ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանի հետ: Հյուրերը մոմեր վառեցին եւ աղոթք բարձրացրին Հայոց հինավուրց տաճարում:

Էջմիածնից ժամանած հյուրերը հանդիպեցին Վրաստանի խորհրդարանական ընտրություններին երկրորդ փուլ անցած «Վրացական երազանք» կուսակցությունից Թբիլիսիի Իսանի շրջանի մեծամասնական պատգամավորության թեկնածու Դավիթ Ճիճինաձեի հետ: Զրույցի ժամանակ շոշափվեցին ընտրվելու դեպքում Հայոց հոգեւոր կենտրոնի եւ Թբիլիսիի հայաբնակ շրջանի հետ մշակութային փոխայցերին եւ համագործակցությանը առնչվող հարցեր:



ԳԵՐՄԱՆԻԱ

«ԿՈՇՏ» ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՐՑՈՎ

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Ֆրանսիայի ղեկավար Ֆրանսուա Օլանդը հոկտեմբերի 19-ի ուշ երեկոյան Բեռլինում բանակցություններ են վարել Սիրիայի խնդրի կարգավորման շուրջ, որոնք Մերկելը բնութագրել է «կարծիքների հստակ ու կոշտ փոխանակում»:

Նշվում է, որ կողմերը հատուկ ուշադրություն են դարձրել Հալեպի շուրջ ստեղծված իրադրությանը:

Արծարծվել է նաեւ հումանիտար դադարի հարցը:

Ապա հանդիպումը շարունակվել է Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը եւ Ուկրաինան ներառող «նորմանդական քառյակի» ձեւաչափով: Կողմերը պայմանավորվել են բանակցություններից անցնել խաղաղ համաձայնագրերի իրագործման «ճանապարհի քարտեզը» կազմելուն:

ՍԻՐԻԱ

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է «ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԴԱԴԱՐ»

Հոկտեմբերի 20-ի առավոտից «հումանիտար դադար» է հաստատվել Հալեպում:

Սիրիայի կառավարությունը վաղօրոք հայտարարել է, որ Հալեպի մի քանի շրջաններում զորքերը հետ են քաշվում իրենց դիրքերից, որպեսզի «զինյալները հնարավորություն ունենան հատուկ ստեղծված միջանցքներով հեռանալ Հալեպի արեւելյան շրջաններից»:

Ինչպես նշում է SANA լրատվական գործակալությունը, բնակիչների ու անզեն ապստամբների խմբերն սկսել են դուրս գալ քաղաքի՝ սիրիական բանակի կողմից պաշարված մասից: Նրանց թվում կան վիրավորներ ու հիվանդ մարդիկ:

ԹՈՒՐՔԻԱ

ՊԱՏ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՅՆՔՈՎ

Թուրքիայի եւ Սիրիայի հետ սահմանին թուրքական Հաթայ բնակավայրից ծգվող 911 կիլոմետրանոց պատի կառուցումը հասել է մինչեւ Քիլիս քաղաք:

Պատը կառուցվում է երեք մետր լայնություն եւ չորս մետր բարձրություն ունեցող, 7 տոննա կշռող բետոնե բլոկների միջոցով: Կառուցված պատի վրա անցկացվել են փշալարեր:

Թուրքական իշխանությունները պատի կառուցումը մեկնաբանում են Սիրիայից ապօրինի ճանապարհներով երկիր մուտք գործելու փորձ անելու դեպքերը բացառելու անհրաժեշտությամբ:

ՇՈՏԼԱՆԴԻԱ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Շոտլանդիայի առաջին նախարար Նիկոլա Սթերջենը հայտնել է, որ հրապարակվել է Մեծ Բրիտանիայից անկախության կրկնական հանրաքվեի անցկացման օրինագծի առաջին տարբերակը:

Նախարարը նշել է, որ օրինագծի հրապարակման պատճառ են դարձել Brexit-ի հնարավոր հետեւանքները, «ներառյալ այն վնասը, որը նա կբերի շոտլանդական տնտեսությանը եւ աշխատատեղերին»:

Հիշեցնենք, որ բրիտանացիների մեծամասնությունը հունիսի 23-ին կայացած հանրաքվեում քվեարկել է ԵՄ-ից դուրս գալու օգտին: Ընդսմին, Հյուսիսային Իռլանդիան եւ Շոտլանդիան պաշտպանել են Եվրամիությանն անդամակցության պահպանումն այն դեպքում, երբ Անգլիան եւ Ուելսը քվեարկել են ԵՄ-ից դուրս գալու օգտին:

Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԵՏ

Եվրամիությունը պատրաստ է համագործակցել ժողովրդավարական ուղիով ընտրված նոր խորհրդարանի ու կառավարության հետ եւ կոչ է անում նոր խորհրդարանի քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչներին համատեղ գործել՝ ի շահ Վրաստանի:

Այս մասին ասված է արտաքին քաղաքականության եւ անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության 2016 թականի հաշվետվության մեջ:

Համաձայն այդ փաստաթղթի, Վրաստանում խորհրդարանական ընտրությունները, ընդհանուր առմամբ, անցան խաղաղ եւ կազմակերպված: «Չնայած բռնության առանձին միջադեպերի, ԵԱՀԿ դիտորդական առաքելության նախնական գնահատմամբ, ընտրությունները անցկացվեցին մրցակցային, հանգիստ մթնոլորտում եւ հիմնարար ազատությունների պահպանմամբ»,- ասված է Եվրամիության խորհրդի հաշվետվության մեջ: Փաստաթղթում նշվում է, որ Եվրամիությունը կշարունակի աջակցել Վրաստանի ջանքերին, երկրի տարածքում առկա դիմակայությունների խաղաղ կարգավորման հարցում: «Եվրամիությունը կրկին հավատարիմ է մնում Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության աջակցության քաղաքականությանը»,- ասված է հաշվետվության մեջ:



ՎՐԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՆԵՐԱՌՆՎԻ 37 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Վրաստանի նախագահի խորհրդարանական քարտուղար Աննա Դոլիձեն օրենսդիր մարմնի ֆինանսաբյուջետային կոմիտեին ներկայացրել է Վրաստանի զինված ուժերի թվաքանակի վերաբերյալ Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի որոշումը:

Խորհրդի որոշման համաձայն, զինված ուժերը 2017 թվականին կներառեն 37 հազարից ոչ ավելի մարդ:

Այդ որոշումը ոչինչ չի փոխում, քանի որ ինչպես ընթացիկ, այնպես էլ անցած տարիներին երկրի զինված ուժերի թվաքանակը չի գերազանցել 37 հազարը:

Վրաստանի զինված ուժերի թվաքանակը հաստատելու է խորհրդարանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ՎՐԱՑԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ԱՐԽԻՎԸ

Սկսվում է Ռուսաստանից վրացական ֆիլմերի արխիվի տեղափոխման գործընթացը: Այդ մասին հայտարարեց Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների հարցերով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն:

Վերոնշյալ հարցով վրաց-ռուսական բանակցություններն արդեն բավական ժամանակ է, ինչ տարվում է: Ռուսական կողմը պարտավորվել է Ռուսաստանի Դաշնության պետական «Գոսֆիլմոֆոնդ» հիմնադրամից, Վրաստանին փոխանցել 1916-ից մինչեւ 1990 թվականը նկարահանված վրացական ֆիլմերի արխիվը:

ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍՊԱՌՎՈՒՄ Է

Ընթացիկ տարվա վերջին ավարտվելու է գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական ստուգումը, թեպետ՝ ներկա դրությամբ, վավերացված 300 հազար ավտոմեքենաներից տեխստուգում են անցել ընդամենը 165 հազար գազով աշխատող մեքենաներ:

Հաջորդ տարվա սկզբից գազով աշխատող ավտոմեքենաների վարորդները, ովքեր չեն անցել տեխստուգում՝ կտուգանվեն:

Տեխնիկական ստուգումը անցկացնող ընկերություններում, վարորդների նման պասիվ վերաբերմունքը բացատրում են տեխստուգման բարձր սակագնով, այն կազմում է 120-130 լարի:

ՈԼՈՐՏ

ՍԱՀՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱԿՏԻՎ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱԿՏԻՎ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Վրաստանի Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին Փարիզում մասնակցեց նոտարիատի 28-րդ միջազգային գագաթաժողովին:

Հանդիպման շրջանակներում Թեա Ծուլուկիանին հանդիպում ունեցավ իր ֆրանսիացի գործընկեր Ժան Ժակ Ուրվուսի հետ: Հանդիպմանը կողմերը խոսեցին արդարադատության ոլորտում Վրաստանի եւ Ֆրանսիայի միջեւ համագործակցության խորացման հարցերի մասին, անդրադարձ կատարեցին Վրաստանի արդարադատության նախարարության կողմից վերջին չորս տարիների ընթացքում իրականացված նշանակալի բարեփոխումներին: Ընդգծվեց, որ այդ ուղղությամբ իրականացված միջոցառումներն ուղղված են պետական ինստիտուտների եվրոպականացմանն ու եվրոպական իրավական համակարգի մերձեցմանը:

Վրաստանի եւ Ֆրանսիայի արդարադատության նախարարները անդրադառնալով նոտարիատի գործունեությանը, ընդգծեցին այդ առումով երկու երկրների միջեւ առկա մարտահրավերների առկայությունը: Ընդգծվեց, որ երկու երկրների համար էլ հրատապ հիմնախնդիր է քաղաքացիական հարցերի կարգավորումը դատարանի միջոցով, որի արդյունքում առանձնակի նշանակություն է ձեռք բերում նոտարական գործունեությունը: Հանդիպման ավարտին Թեա Ծուլուկիանին Ֆրանսիայի Արդարադատության նախարարին հրավիրեց Վրաստան:

ԲԱՆԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԸ ԿՊԱՐԶՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, պարտադիր զինծառայության համար զորակոչի վերականգնման հարցը հայտնի կդառնա նոյեմբերի սկզբներին:

Նրա խոսքերով, ծրագրված է հանձնաժողովի ընդլայնված նիստ, կանցկացվեն հանդիպումներ՝ նաեւ խորհրդատվություններ փորձագետների ու ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որից հետո մանրամասն հայտնի կդառնա, թե ինչ դիրքորոշում է գրավելու նախարարությունը վերոնշյալ հարցում:

«Ես հանրությանը խոստացել եմ, որ հոկտեմբերին կսկսենք երկխոսություն այն ռազմավարության հարցով, որը մշակվել է մեր կողմից: Նոյեմբերի սկզբներին հանրությանը կներկայացնենք անցած հարյուր օրերի աշխատանքի հաշվետվությունը, ինչպես նաեւ առաջիկայի կոնկրետ ծրագրերը: Կներկայացնենք նաեւ զորակոչի վերաբերյալ մեր դիրքորոշումը»,- հայտարարեց Լեւան Իզորիան:

Հիշեցնենք, որ Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Թինա Խիդաշելու կողմից հունիսի 27-ին ընդունված որոշմամբ, պարտադիր զինծառայության զորակոչը դադարեցվել էր:

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԳԻՎԻ ԹԱՐԳԱՄԱԾԵԻ ՄԵՔԵՆԱՅԻ ՊԱՅԹԵՑՄԱՆ ՄԵՋ ԿԱՍԿԱԾՅԱԼԻ ՓՆՏՐՈՒՔ

Ինչպես արդեն հաղորդել ենք, պատգամավոր Գիվի Թարգամաձեի մեքենայի պայթեցման գործով մեղադրյալներ Բորիս Չագունավայի եւ Դավիթ Խեչուաշվիլու համար դատախազության պահանջով սահմանվել էր նախնական կալանք: Բորիս Չագունավան արդեն գտնվում է կալանքի տակ, իսկ Դավիթ Խեչուաշվիլու դեմ հայտարարված է փնտրուք:

Հիշեցնենք, որ Ազգային շարժման լիդերներից մեկի՝ Գիվի Թարգամաձեի մեքենան պայթեցվեց հոկտեմբերի 4-ի երեկոյան՝ քաղաքի կենտրոնում: Պայթեցման հետեւանքով տուժեց հինգ մարդ: Անձամբ պատգամավորն ու մեքենայի վարորդը մնացին անվնաս:

Տեղի ունեցածի կապակցությամբ, ՆԳ նախարարությունը հարուցել է քրեական գործ քրեական օրենսգրքի 19-109-րդ հոդվածով, որը նախատեսում է կանխամտածված սպանության փորձ:

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԽՍՏԱՑՎՈՒՄ Է

Վրաստանի Ազգային բանկը տարադրամի փոխանակման կետերի համար հաստատել է նոր կարգ, որի նպատակը սպառողների իրավունքների եւ շահերի պաշտպանությունն է: «Վերջին ժամանակներում տարադրամի փոխանակման առանձին կետերի կողմից հաճախակի են դարձել փոխանակման կուրսի ցուցանիշներով խուսանավման քաղաքացիներին թյուրիմացության մեջ գցելու փաստերը: Նման փաստերի կանխման եւ սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով, Ազգային բանկի նախագահի հրամանով կարեւոր փոփոխություններ են կատարվել «Տարադրամի փոխանակման կետերի գրանցման ու կարգավորման կարգում»,- ասված է Ազգային բանկի կողմից տարածված հայտարարության մեջ: Իրականացված փոփոխության համաձայն, տարադրամի փոխանակման կետը պարտավոր է սպառողներին լիարժեք տեղեկատվություններ ներկայացնել տարադրամի փոխանակման կուրսի, մատուցած սպասարկման սակագնի եւ ուշադրության կուրսի (եթե նմանը գոյություն ունի) վերաբերյալ:

«Ուշադրության կուրսը» նոր հասկացություն է, որը ներդրված է կարգում եւ, որը նշանակում է փոխանակման կետի կողմից սահմանված կուրսը, որի ժամանակ տարադրամի վաճառքի եւ գնման միջեւ տարբերությունը գերազանցում է 3 տոկոսը:

Փոխանակման կետը պարտավոր է սպասարկման սակագնի եւ ուշադրության կուրսի վերաբերյալ տեղեկատվությունը տեղակայել սպառողի համար երեւացող տեղում (գանձարկղի մոտ եւ տարադրամի առուվաճառքի հայտարարության վահանակին) այն տառատեսակով, որը նման է փոխանակման կուրսի վահանակին: Կարգի համաձայն, տարադրամի առուվաճառքի կուրսի վահանակը պետք է ձեկակերպվի Ազգային բանկի կողմից սահմանված պահանջների պահպանմամբ: Փոխանակման կետերին պարտադրվում է ձեւակերպել անդորրագիրը, սպառողի պարտադիր ստորագրման, ինչը հաճախորդին լրացուցիչ հնարավորություն է ընձեռում կրկին անգամ ծանոթանալու փոխանակման գործընթացի պայմանների հետ:

Տարադրամի փոխանակման կետի կողմից սպառողին տեղեկացնելու պարտավորության խախտման բացահայտման դեպքում, կետի սեփականատերը գրանցման անվավեր ճանաչման պահից երկու տարվա ընթացքում կզրկվի նոր գրանցման համար Ազգային բանկին դիմելու իրավունքից: Միաժամանակ, վերոնշյալ ժամանակահատվածում այդ անձը զրկվում է տարադրամի փոխանակման կետի կառավարման մարմնի գործընկեր, բաժնետեր, անդամ կամ կառավարիչ տնօրեն լինելու իրավունքից:

Վրաստանի Ազգային բանկը բնակչությանը կոչ է անում առավել ուշադրություն դրսեւորել տարադրամի փոխանակման գործընթացի ժամանակ եւ վերստուգել փոխանակման կուրսի, ինչպես նաեւ սպասարկման սակագնի վերաբերյալ տեղեկատվությունը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լի տոկոսը բացահայտվեց ընդամենը 23 ընտրատարածքում: Դրանցում հաղթանակը տոնեցին «Վրացական երազանքի» թեկնածուները: Ինչ վերաբերում է մնացած 50 ընտրատարածքներին, ապա դրանցում կանցկացվի ընտրությունների երկրորդ փուլը: Առանձին բացառություններով, երկրորդ փուլին հիմնականում միմյանց կդիմակայեն «Վրացական երազանքի» եւ «Միասնական ազգային շարժման» թեկնածուները: Այդ առումով բացառություն են կազմում Ճիաթուրայի թիվ 56 ընտրատարածքը, որտեղ «Վրացական երազանքի» թեկնածուին կդիմակայի ազատ ժողովրդավարների ներկայացուցիչը, Մցխեթայի թիվ 37 եւ Լանչխութիի թիվ 60 ընտրատարածքները, որտեղ կառավարող կուսակցության թեկնածուին կդիմակայեն անկախ թեկնածուները: Ինչ վերաբերում է Գորիի թիվ 41 ընտրատարածքին, ապա այստեղ երկրորդ փուլ էին անցել ազատ ժողովրդավարների կողմից առաջադրված Իրակլի Ալասանիան (33,69 տոկոս) եւ «Երազանքի» թեկնածու Իոսեբ Մակրախիձեն (19,38 տոկոս): Հոկտեմբերի 8-ից հետո Իրակլի Ալասանիան հայտարարեց, որ ինքը մտադիր չէ մասնակցել երկրորդ փուլին, թեպետ հոկտեմբերի 30-ին անցկացվելիք ընտրություններում նրա ազգանունը քվեաթերթիկում կվավերացվի: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, ընտրությունների երկրորդ փուլը կանցկացվի հոկտեմբերի 30-ին:

Նշենք, որ առանձին ընտրատարածքներում, մասնավորապես, Մառնեուլիի թիվ 36 եւ Զուգդիդիի թիվ 66 ընտրատարածքների առանձին տեղամասերում այսօր՝ հոկտեմբերի 22-ին, կանցկացվեն կրկնական ընտրություններ:

Հատկանշական է, որ 50 ընտրական տեղամասերից, որտեղ անցկացվելու է երկրորդ փուլ, 18-ը թբիլիսյան ընտրատարածքներն են: Ընտրությունների երկրորդ փուլը կանցկացվի Մթածմինդայի, Վակեի թիվ 2, Սաբուրթալոյի թիվ 6, Կրծանիսիի, Սամգորիի թիվ 11, 12, 13, Դիդուբեի թիվ 15, 16, Նաձալադեւիի թիվ 17, 18, 19, Գլդանիի 20, 21, 22 ընտրատարածքներում:

Իսանիի շրջանի երեք ընտրատարածքներում՝ թիվ 8, 9 եւ 10-ում կանցկացվեն երկրորդ փուլի ընտրություններ: Այս ընտրատարածքներում միմյանց կդիմակայեն կառավարող կուսակցության եւ «Միասնական ազգային շարժման» թեկնածուները: Մասնավորապես, Իսանիի թիվ 8 ընտրատարածքում երկրորդ փուլում հանդես կգան «Երազանքի» ներկայացուցիչ Իրակլի Աբուսերիձեն, որը առաջին փուլում ստացել էր ընտրողների 42,74 տոկոսի աջակցությունը եւ «Ազգայնական» Գոգա Օնիանին՝ 24,12 տոկոսով: Իններորդ ընտրատարածքում «Երազանքի» թեկնածու Դավիթ Ճիճինաձեն, որը առաջին փուլում ստացավ ընտրողների 48,13 տոկոսի ձայները, կմրցակցի ազգայնական Բեսիկ Կվիցիանու հետ, որի ակտիվում գրանցվել էր 27,37 տոկոսի աջակցություն: Տասներորդ ընտրատարածքում «Երազանքի» թեկնածու Բեքա Նացվլիշվիլուն (45,07 տոկոս) կդիմակայի ազգայնական Զազա Կեդելաշվիլին (26,61 տոկոս):

Ինչ վերաբերում է մյուս ընտրատարածքներին, ապա երկրորդ փուլը կանցկացվի Սագարեջոյի, Գուրջաանիի թիվ 24, Լագոդեխիի թիվ 26, Թելավի-Ղվարելիի թիվ 27, Ախմետայի թիվ 28, Ռուսթավիի թիվ 29, 30, Կասպիի թիվ 39, Գորիի թիվ 42, Խաշուրիի թիվ 43, **Ախալցիխեի թիվ 44 (այստեղ ազգայնական Վաժա Չիտաշվիլուն՝ 44,32 տոկոս, կդիմակայի «Երազանքի» Գիորգի Կոպաձեն՝ 39,52 տոկոս),** Քութաիսիի թիվ 47, 48, 49, Բաղդադի-Խարագաուլիի թիվ 51, Զեստափոնիի թիվ 52, Փոթիի թիվ 61, Աբաշայի թիվ 63, Սենակիի թիվ 64, Զուգդիդիի թիվ 65, Ծալենջիխա-Չխորոծղուի թիվ 67, Բաթումիի թիվ 68, 69, 70, Քոբուլեթիի թիվ 71 եւ Խելվաչաուրիի թիվ 72 ընտրատարածքներում:

Թերթի նախորդ համարում տեղեկատվություն էր տպագրվել այն մասին, որ **Ախալցիխեի քաղաքապետի ընտրություններում հաղթել էր «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչը: Թեպետ տվյալների հստակեցումից հետո պարզվեց, որ «Ազգային շարժման» թեկնածու Իրակլի Էրեկլիշվիլին հավաքել էր 45,98 տոկոս, հետեւաբար չի հաղթահարել 50 տոկոսի արգելագիծը եւ հոկտեմբերի 30-ին նա երկրորդ փուլում կմրցակցի «Վրացական երազանքի» ներկայացուցիչ Վլադիմիր Զեդգինիձեի հետ, որը իր ակտիվում գրանցել էր ձայների 36,99 տոկոսը:**

Այսպիսով, ներկա դրությամբ, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը նոր գումարման խորհրդարանում արդեն ապահովել է 67 մանդատը եւ հոկտեմբերի 30-ին անցկացվելիք ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով, ամենայն հավանականությամբ, խորհրդարանում կունենա սահմանադրական մեծամասնություն:

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՋԱՏ ԷԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րած ընտրության համար: Առանձնակի ցանկանում եմ շնորհակալություն հայտնել այն ընտրողներին, ովքեր մեծ վստահություն ցուցաբերեցին մեր նկատմամբ»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ երկրի քաղաքացիներին կոչ արեց առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերել ընտրությունների երկրորդ փուլում:

Անդրադառնալով նոր գումարման խորհրդարանում կառավարող կուսակցության հնարավոր սահմանադրական մեծամասնություն ունենալու թեմային, կառավարության ղեկավարը նշեց, որ այն անհրաժեշտ է, որպեսզի «Վրացական երազանքը» կատարի իր տված խոստումները: Վարչապետի հավաստմամբ, սահմանադրական մեծամասնության շուրջ սկսված իրարանցումը քաղաքական շահարկում է: «Վրացական երազանքը» հաղթեց բացարձակ մեծամասնությամբ, ինչը մեզ համար վիթխարի պատասխանատվություն է ողջ երկրի, մեր ընտրողների առջեւ: Հետեւաբար, ուղղակի քաղաքական շահարկում է այն կանխատեսումը, թե իբր երկիրը կկործանվի, որ սահմանադրական մեծամասնությունը արհեստականորեն է ձեւակերպվում: Նախկինում եղել են դեպքեր, երբ սահմանադրությունը հարմարեցվել է մի մարդու, մի քաղաքական ուժի շահերին, ինչը հանգեցրել է իշխանության շահարկմանը: Հենց այդ պատճառով էլ մեզ անհրաժեշտ է սահմանադրական մեծամասնություն, որպեսզի կատարենք ընտրողներին տված խոստումները եւ, որպեսզի մինչեւ վերջ հասցնենք այն հավակնոտ ծրագրերը, որոնց մասին մենք խոսում էինք եւ սկսել ենք դրանք իրականացնել: Իսկ դա նշանակում է, որ հաջորդ չորս տարիների ընթացքում Վրաստանում պետք է ստեղծել զարգացման աննախընթաց բարձր դինամիկա, երկիրը լուրջ քայլեր պետք է կատարի տնտեսական եւ սոցիալական զարգացման ոլորտում եւ ելնելով եվրոպական եւ եվրատլանտյան օրակարգից, շարունակել այն կարեւորագույն բարեփոխումները, որոնք սկսված են: Իսկ դրա համար մեզ անհրաժեշտ է սահմանադրական մեծամասնություն»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ հուսով է երկրորդ փուլի ընտրություններից հետո «Վրացական երազանքը» իրոք կունենա սահմանադրական մեծամասնություն:

Խոսելով սահմանադրության հնարավոր փոփոխությունների մասին, վարչապետը առաջարկեց ստեղծել հատուկ խումբ, որը կզբաղվի սահմանադրության փոփոխությունների մշակմամբ: «Անհրաժեշտ է ստեղծել խումբ, որը լայն հասարակայնության մասնակցությամբ կմշակի այնպիսի փոփոխություններ, որոնք առաջիկայում թույլ չեն տա մենաշնորհել, շահարկել իշխանությունը, որպեսզի դա մեկընդմիշտ դառնա եվրոպական եւ ժողովրդավարական Վրաստանի սահմանադրություն: Սակայն դա չի նշանակում, որ նոր խորհրդարանում մենք անմիջականորեն կզբաղվենք սահմանադրության փոփոխմամբ: Այդ հարցում շտապելը բարվոք արդյունքի չի հանգեցնի»,- ընդգծեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

TAX FREE

ՇՀՄՈՒՍԱՎԼԵԳԻՆ ՍԱՄՍԱԽՈՒՐՈ

ԻՆՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ TAX FREE ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Օտարերկրյա քաղաքացու կողմից Վրաստանում իրավասու առեւտրական օբյեկտներում գնած ապրանքի համար վճարած արժեքի հավելյալ հարկի (ՀԱՀ) գումարի վերադարձումը, որը հաշվարկվում է փոխանցված ՀԱՀ-ի գումարից՝ ապրանքի արժեքի 18 տոկոսը- եկամուտների ծառայության սպասարկման սակագինը եւ բանկի կողմից ցուցաբերած սպասարկման կոմիսիոն բաժնեմասով: Եկամուտների ծառայության սպասարկման սակագինը կազմում է ապրանքի առանց ՀԱՀ-ի արժեքի 4 տոկոսը, իսկ բանկի կոմիսիոն սակագինը վերադարձվող ՀԱՀ-ի գումարի 3 տոկոսը:

ՈՐՏԵ՞Ղ Է ՀՆԱՐԱՎՈՐ ԳՆԵԼ TAX FREE ԱՊՐԱՆՔԸ

Ապրանքը հնարավոր է գնել այն խանութներում, որոնք ունեն TAX FREE հատուկ անդորրագրի հանձնման իրավունք եւ ապրանքի հանձնումը հարկադրվում է ՀԱՀ-ով:

ՀԱՀ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

* Որպեսզի ունենաք վճարած ՀԱՀ գումարի վերադարձման իրավունք, պետք է լինեք օտարերկրյա քաղաքացի:
* ՀԱՀ գումարի վերադարձման պահանջը կարելի է ներկայացնել ապրանքի եւ ոչ թե մատուցած սպասարկման համար:
* Գնումների արժեքը պետք է գերազանցի 200 լարին՝ ՀԱՀ գումարի բացառությամբ՝ մեկ անդորրագրից ելնելով:
* Գնված ապրանքը պետք է լինի երկրից արտահանման ենթակա:
* Ապրանքի արտահանումը պետք է իրականացվի գնումից առնվազն երեք ամսվա ընթացքում:
* Դուք պետք է ունենաք ՀԱՀ գումարի վերադարձման հատուկ անդորրագիրը:
* ՀԱՀ գումարի վերադարձման հատուկ անդորրագրում նշված ապրանքը լրիվությամբ պետք է դուրս բերվի Վրաստանի տարածքից:
* Ապրանքը պետք է տեղադրված լինի հատուկ կնքված ծրարում, բացառությամբ նույնականացված ապրանքների: Պարտադիր է կնիքի ամբողջականությունը լինի պահպանված:

Նույնականացված է այն ապրանքը, որը գործարանային կարգով նույնականացված է անհատական (բացառիկ կոդ- կոմբինացիով, ինչը դրան վերապահում է նույնականացման հնարավորություն:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՎ ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐԵԼԻ Է ՊԱՀԱՆՋԵԼ ՀԱՀ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄԸ

* Երկրից դուրս գալիս դիմեք եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի մաքսային սպային եւ ներկայացրեք ՀԱՀ-ի գումարի վերադարձման հատուկ անդորրագիրը, անձնագիրը եւ տոմսը (օդանավակայանի դեպքում):
* Ձեզ մոտ ունեցեք այն իրերը, որոնց ՀԱՀ-ի գումարը պահանջում եք, քանի որ մաքսային սպան դրանք ստուգելու իրավունք ունի:
* Ապրանքը ստուգելու ժամանակ փաստացի ներկայացման եւ անդորրագրում նշված ապրանքի անհամապատասխանության, ինչպես նաեւ ՀԱՀ գումարի վերադարձման համար անհրաժեշտ այլ պահանջների խախտման դեպքում, ձեզ հավելյալ արժեքի հարկ չի վերադարձվի:
* Մաքսային սպան անդորրագիրը հաստատում է կնիքով եւ վերադարձնում անդորրագրի բնօրինակը:
* ՀԱՀ գումարը կարող եք ստանալ բանկում՝ կանխիկ կամ ոչ կանխիկ հաշվով, անձնագրային ստուգումն անցնելուց հետո:
* Սահմանային նավահանգիստներում ՀԱՀ-ի գումարի վերադարձումը կարելի է իրականացնել մաքսային վերահսկողության անցումից հետո, եթե անձնագրային ստուգումը օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է ծովային տրանսպորտի վրա:
* Ոչ կանխիկ հաշվի փոխանցմամբ, օտարերկրացու կողմից մուծած ՀԱՀ-ի գումարը նրան վերադարձվում է երկրի տարածքից հեռանալուց առնվազն 30 օրացուցային օրվա ընթացքում, իսկ կանխիկ վերադարձման դեպքում, օտարերկրյա քաղաքացիություն հաստատող փաստաթղթի եւ անդորրագրի ներկայացնելուց հետո:

Նկատի ունեցեք, որ ՀԱՀ-ի գումարը չի վերադարձվում հետեւյալ ապրանքների հաշվով.

* Արագ փչացող ապրանքի:
* Տրանսպորտային միջոցի:
* Ոսկու, որի ծավալը գերազանցում է 125 գրամը եւ, որը չի ներկայացված զարդեղենի տեսքով:
* Թանկարժեք քարերի:
* Ապրանքի, որը Վրաստանի տարածքից դուրս բերելու համար պահանջվում է հատուկ թույլտվություն կամ հավաստագիր, բացառությամբ՝ Վրաստանի տարածքից Վրաստանի մշակութային արժեքների դուրսբերման ենթակա ապրանքների:
* Վրաստանի հարկային օրենսդրության 168-րդ հոդվածի համաձայն, ՀԱՀ-ից ազատված ապրանքների:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ